Ե. ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ա. ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ-ԽԱՂԵՐ

1

—Ախպե՛ր, ախպե՛ր, ես քու շուն,
Ի՞նչ իս բառձի քու իշուն.
«Խունկ, հինա ու ապրըշում»։
—Վի՞ր կը տանիս.
«Դղեղին.
Դղեղն յետև սարերուն՝
Բուրդ կը գզե գելերուն,
Թել կը մանե հավքերուն.
Շոր կը կարե ճժերուն»։

2

Ամեկ ուր տուն,
Լակլակ ուր բուն,
Խաչ-գավազան
Իմ քեռու տուն։

3

Այբ, բեն,
Տախտակ տփեմ,
Բանի գա՝ փախնիմ,
Հացի գա՝ պուպզիմ։

4

Այբ, ժե, ճե, ռա,
Ճաշի պուտուկ կեռա,
Յամա՞ն, մարե, շո՛ւտ էրե,
Ես անոթնե մեռա։

5

Անիծիմ՝ անիծվիս,
Ցոտքե գլուխ պղոճկիս,
Ցելնաս հավեն,
Պատիս թավեն,
Ջը պրծընաս
Գլխուդ ցավեն։

6

Արա՞բ, արա՞բ,
Վի՞ր կամն է պարապ.
Կաման տեր մեռի՝
Ցոտներն է կեռի։

7

Արև, արև, յե՛լ դուս,
Ճիտու ճղեն հա՛ն դուս,
Ես կը լողամ, ես կը դողամ,
Թաֆթա շապիկ թալ գլխուս։

8

Գացի Ստամբոլ,
Բերի փարա բոլ,
Առա շուխտըմ սոլ,
Հագանք դորեցդոր։

9

Գինի, գինի, գինըստան,
Աղջիկ ունիմ շահրըստան,
Մանտր հլնի շարող է,
Թաֆթա շապկի կարող է։

10

Դհոլ ուրանց,
Զուռնեն ուրանց,
Զարկին ուրանք,
Խաղան ուրանք։

11

Դըմբո՛, դըմբո՛.
«Հա՛».
—Քու մամ ի՞նչ է էփի.
«Քալաճոշ»։
—Ի՞նչ է թալի մեշ.
«Կատվի դոշ»։
—Քըզի ի՞նչ է կորի.
«Օսկի մատնիք»։
—Յու՞ր է կորի.
«Ժամու տանիք»։
—Ես իմ դտի ու չըմ ի՞տա։

12

Ջնջըլիկ, բա՛ր ջնջըլիկ,
Թուր ու թվանք ու մոթըլիկ,

Ավա է՛դ է, ավա ճը՛տե,
Կուզ Մարգարեն քու... խտե։

13

Ընթերցված առակաց,
Քասեմ թթու, էրկու հաց,
Իրեք մարդ էկան Մոկաց,
Բերսն ուրանց մնաց բաց։

14

Ընթերցված Հոբա,
Էրկու մարդ էկան Կոփա,
Ամեկու ձեռ մեկ-մեկ սոփա,
Վին կը զարկեն՝ կըսեն թոպա՜։

15

Թռի՛, թռի՛, թռցընեմ,
Սև հավու միս կերցընեմ,
Նռան գինի խմցընեմ,
Ծառի հովուն քնցընեմ։

16

—Իմ մամ կերի խավըռծիլ,
Ընձի բերի օսկեծիլ։
«Քու մամ կերի ձվաձեղ,
Քըզի բերի քոռ ընձեղ»։
—Իմ մամ կերի գարընցան,
Ձիսի բերի ի հնձան։
«Քու մամ կերի թթու թան,
Քըզի բերի վթվթան»։

17

«Լակլըկո,
Հաչի Բեկո,
Ցուստե՞ն գիկաս»։
—Սև սարերուց.
«Ի՞նչ իս բերի».
—Թուղթ մե սապոն.
«Վի՞ն կը տանիս».
—Հաչու մամուն,
Լվա լաչին,
Թալե դլխուն,
Ցելնա գարո՜ն։

18

—Կուկլուլուլո՜ւ, սա՛նամեր,
Մեր կոկոլ հավն ու՞ր գնաց.
—Սալով աղբուր՝ ջուր գնաց։
—Ի՞նչ կէր կտուց.
«Ձիր-չամիչ»։
—Վի՞ն կը տաներ.
«Հարս-փեսին»։
—Հարսն ու՞ր էր.
«Վըր օսկե թախտի՞ն»։
—Փեսե՞ն ուր էր.
«Վըր օսկե բարձի՜ն»։

19

Կտո՛, կտո՛ մատանա,
Յոանե գլուխ սատանա,
Կտոն կանի վըր փլին,
Փըրցավ ֆընկավ մեջ տըլին։

20

Համբարձի՛,
Ձէշ բարձի,
Գետն ֆընցի։

21

Հայը մեր օր էրկինք վկա,
Կերա թթու՝ փքա,
Ընկա ջուր՝ սրկա,
Ցելս դուս՝ լրկա։

22

Հա՛ր ձձում, հա՛ր ձձում,
Տանիմ բերիմ՝ դրմբրցում,
Մեղր ու կարագ՝ ընձի,
Թան ու թանջուր՝ քըզի։

23

Զուկն ու մուկ՝
Մեկ տապակ,
Զո՛ւկ թալիմ,
Զո՛ւկ ուտիմ,
Մո՛ւկ թալիմ,
Զո՛ւկ ուտիմ։

24

Ճի՜վ ու ճի՜վ
Ագռավու ճիվ.
Թռավ գնաց Ցերուսաղեմ,
Բուրդ եբեր,
Բամբակ չեբեր,
Շալ եբեր,
Շալվար չեբեր.
Ճնճղիկ թռա՜վ գնաց։

25

Ճի՜վ ու ճի՜վ ու ճնճղիկ,
Թռավ գնաց առվի եղրիկ,
Կերավ կտիկ, խմեց ջրիկ,
Թռա՜վ մտավ Մկրո ծոցիկ։

26

Մուխսի Թըմեն
Նստի ձրմեն,

Ինքն ուր քրմեն
Կաժե ղրմեն։

27

Ցառջին՝
—Քոռ չարչին.
Միջին՝
—Ջամչի խեչին.
Ցետին՝
—Մտնա դետին։

28

Նարին-նարին էկեր է,
Շարե շապիկ հագեր է,
Նարին-նարին ի՞չ գուզե, –
Կթան կովուց ե՛ղ գուզե,
Ջալ հավուց հավկիթ գուզե,
Էրկնքուց ամպեր գուզե,
Ամպերուց անձրև գուզե.
Ոն մեր ուզած տա մըզի՝
Անձրև գիշնա վրը ձըզի։

29

Նստիմ հով,
Կթիմ կով,
Ջմբիկ զարկիմ՝
Պատիմ ծով։

30

Ուլն ֆելավ ուռի ծառնուվի,
Ուլն ուր պոչով ուռ օլրեց.
Ու՛ռ, ա՛ռ օլոր,
Ու՛ռ, ա՛ռ օլոր։

31

Վիճակ դրինք վըր իշուն,
Վիճկի թևերն էր նըխշուն.
Ջուհաբ տարեք մեր փեսին՝
Ցիգա հասնի նորհարսին, –
Նըխշ ու նկար մեր վիճկուն՝
Էրնե՞կ առնողի հոգուն.
Կլոր ֆերես, ընքներ թուխ,
Աժե Մուշն ու Բուլանուխ։
Խանգար ծամեր, բարակ բաժ,
Բիլոռ աչքեր խաժ ու մաժ,
Վիճակն իշուց բերինք ցած,
Վիճկու բերան մնաց բաց.
Վիճակ դրինք վըր փլին,
Փրցավ ֆընկավ մեջ տըլի՞ն։

32

Տերնգես,
Դարման ու կես,
Առնիմ չվան
Ցելնամ ի դեզ։

33

Տիտոխիկ,
Տիտմարոխիկ,
Ջուռնաթխիկ,
Թուխ մանուկիկ.
Էփե գաթա ու կուլունճա,
Եղն ի վրեն կը պճպճա.
Հազնի իդա,
Կապե ինա,
Խմե իդա,
Ցելնա ինա,
Վի՞ր տուն ֆիշնա.
—Գոզալի տուն.
Էս Գոզալ,
Էս Մուրագ,
Էս Դիլբար,
Էս Գասպար,
Էս Բաբրոն,
Էս Գաբրոն,
Էս կատոն,
Էս մուկիկ։

34

—Քըզի կիտամ կոտ մե օսկի,
Ա՛ռ, բարիշի, խնամի։
«Քու կոտ կոտրի,
Օսկին թափի,
Ջըմ բա՛րիշի, խնամի»։

—Քըզի կիտամ մաղ մե արծաթ,
Ա՛ռ, բարիշի, խնամի։
«Քու մաղ ծակի,
Արծաթ թափի,
Ջըմ բա՛րիշի, խնամի»։

—Քըզի կիտամ գոմ մե օչխար,
Ա՛ռ, բարիշի, խնամի։
«Քու գոմ փտկի,
Օչխար սատկի,
Ջըմ բարիշի, խնամի»։

—Քըզի կիտամ բեռ մե խնձոր,
Ա՛ռ, բարիշի, խնամի։
«Քու բեռ ծակի,
Խնձոր թափի,
Ջըմ բարիշի, խնամի»։

Խնա՛մի, խոշ իս էկի,
Դարտակ ու բոշ իս էկի,

Էրկու բոլոճ իս բերի,
Էն լե ճամպին իս կերի։

Բ. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1

Ամպ օրորաց,
Զուն թորթրաց,
Ամպն ի բարձ,
Քարվան ի դարձ։
(Մեռել)

2

Աշի, աշի՝
Գըմշու կաշի,
Ո՛չ կը հալի,
Ո՛չ կը մաշի։
(Ոսք)

3

Արծվին թամք ին դրած,
Արծիվ թռավ, թամք մնաց։
(Հոգի և մարմին)

4

Արտ մ՝ ունինք՝
Քաղեցի, խոռմեցի։
Արտ գնաց,
Խոռոմ մնաց։
(Ոչխար և բուրդ)

5

Բռնիմ ափով, շաղ տամ թաթով,
Մեռնի տարով, ապրի բարով։
(Ցորեն)

6

Բոլոր տանիս,
Մեշ վարդենիս։
(Գաթա)

7

Ես ու շաչոն
Գացինք բար.
Շաչոն չէրներ՝
Կը մնենք սար։
(Աչք)

8

Էն ի՞նչ է, ի՞նչ,
Կռնա՞ս հանի.
Հոգի ունի,
Մարմին չունի։
(Քամի)

9

Էս դեն դար,
Էն դեն դար,
Լուսից չուր մութ՝
Անդադար։
(Գետ)

10

Էրկու ձուկ
Ի մեկ տապակ,
Մեկն է պաղ,
Մեկն է տաք։
(Լուսին ու արև)

11

Ընչուկ ունիմ,
Փնչուկ ունիմ,
Ըսկի բանե
Խաբար չունիմ։
(Քիթ)

12

Ինքն ի հող,
Մուրուքն ի շող։
(Բողկ, շաղգամ, ճակնդեղ)

13

Ինքն ի հողեն,
Մահն ի ջրեն։
(Աղ)

14

Ինք քընց լոն,
Բաժ քընց սուն։
(Կանեփ)

15

Կարմիր պուտուկ
Վըր դարին,
Աչքով կենե
Մակարին։
(Ճակնդեղ)

16

Կեռ մանկղոն՝
Հարի Տրապիղոն։
(Միաձան)

17

Կոլոտ Կարապետ
Քար կը կրե բերդ։
(Դալ)

18

Հանելուկ,
Հանմանելուկ,
Ծերն ի ծաղիկ,
Տակն ավելուկ։
(Խավրծիլ)

19

Հանիս-մանիս, հանմանիս.
Ընձի մրոտ ծառ մե կա,
Ծառի գլուխ գոլ մե կա,
Մըջ էդ գոլին օձ մե կա,
Օձու գլխուն վարդ մե կա։
(Ճրագ)

20

Զին ի ձոր թամքեցին,
Գլուխ էրկինք հասուցին։
(Ծուխ)

21

Զին ի ձոր,
Քուռակն ի փոր։
(Ծիրան)

22

Ուլուլիկ,
Պուլուլիկ,
Մեջն իլին
Կարմիր ուլինք։
(Նուռ)

23

Սարեն գիկա
Սլվլալեն,
Օսկի պեխեր
Պլպլալեն։
(Գերանդի)

24

Սիվտակ կալին
Հատիկ մաղիմ,
Ձեռքով ցանիմ,
Լեղվով քսղիմ։
(Թուղթ ու գիր)

25

Սև է քընց սաթ,
Սիվտակ է քընց կաթ,
Կարմիր է քընց վարդ։
(Արագիլ)

26

Վերև կաչքիմ՝ ունքս է,
Ներքև կաչքիմ՝ մուրուքս է։
(Անել վիճակ)

27

Տաս վըր չորսին,
Չորս վըր մեկին,
Մեկ վըր ծնկան,
Էնի ո՞ն է կանուկ
Վըր քու կընկան։
(Տասը մատները, կովի չորս պտուկները, կթոցը, ծնկները և կովը)

28

Քըսթ յոգա,
Քըսթ յոնա,
Խռովի՝ նստի յոնա։
(Ավել)

29

Քոնուկ գաղեն
Կախուկ պատեն։
(Մաղ)

30

Փետե օրոց,
Մսե տղա.
Քանի զարկիս՝
Կը վզվզա։
(Տամպուրա)

31

Հավք մե ֆիշավ էրկընուց,
Օսկե լագան էր կտուց,
Հա՛ էրեց, հո՛ւ էրեց,
Յոթ բան չը գտավ աշխարք։—
Ծովուն՝ ծածկոց,
Էրկնուց՝ սուն,
Ջորուն՝ ծնունդ,
Հավուն՝ կաթ,
Ափուն՝ մազ,
Ծծին՝ օսկոռ,
Լեզվին՝ փուշ։

Գ. ՀԱՆԳԱՎՈՐ ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

1

Անուն կա՝
Անկուն չկա։

2

Անցուկ՝
Մոռցուկ։

3

Աշխար դմակ,
Մարդ մեջ դանակ։

4

Աշխար կա՝ ծով,
Աշխար կա՝ սով։

5

Ախպոր տղա՝ չա՛ն տղա,
Քրոջ տղա՝ շա՛ն տղա։

6

Աստված ընձղուն անկաջ էնե՝
Վարդեվարին ձուն կը դնե։

7

Աստված օր ձախե՝
Տար զմեն ծախե։

8

Ամառ կը պառկի հովեր,
Ձմեռ կը փիցու կովեր։

9

Աղեկ լողվոր՝
Վերջո կէրթա ձկան փոր։

10

Աղեկ ձին՝ ուր կեր ղեվըլցու,
Վատ ձին՝ ուր կեր կը պակըսցու։

11

Անդատել օր՝
Անոթի փոր։

12

Անթառամ ծաղկին թոռմել չկա,
Առսըղ կնկան պառվել չկա։

13

Անզեռ մարդու համար
Մեկ ին շիբն ու շաքար։

14

Աղեկ մանած օր էղներ՝
Հոր պատեն կախած կէղներ։

15

Արտ խախուտ,
Մըհանեն կարկուտ։

16

Ահիկ՝
Տանե զմահիկ։

17

Աղ ու հաց,
Սիրտն ի բաց։

18

Անլի խորոթա՝
Անխորիս գաթա։

19

Անհախ կէղնի,
Անճաշ չէղնի։

20

Ամեկ երկրին—մե՛կ թագավոր,
Ամեկ կնկան—մե՛կ գլխավոր։

21

Անտեր մնաս դու բողազ,
Ինչ օր տեսնաս՝ կը դողաս։

22

Արևիկ զուզենք՝ էղավ անձրևիկ,
Անձրևիկ դուզենք՝ էղավ կարկըտիկ։

23

Արևո՛վ էրե քու ճար,
Ցիրկուն չը մնաս անճար։

24

Արուն արնով չը՛ լվան,
Արուն չրո՛վ կը լվան։

25

Աշխար արոտ,
Մենք մեջ կարոտ։

26

Ամեն կնիկ կնիկ էղնի՝
Պատեր ջրմեն պլիկ կէղնի։

27

Բանձր խոսա շատ օրդու տեր.
Լեն-լեն քելև շատ օսկու տեր։

28

Բան էնողն՝ օսկուց թանկ,
Անբան մարդն՝ ավանակ։

29

Բեռդի քի՛չ բառձի,
Շուտ ետ դառձի։

30

Բուռ մե կուտ՝
Աժե բեռ մե սուտ։

31

Գառ կուտե հրտ դիլուն,
Գիկա դիլա հրտ տիրուն։

32

Գլով ժողվինք,
Շերփով տվինք։

33

Գելն օր ամպեն վախեներ՝
Ուրին բերդ մը կը շիներ։

34

Գեշ կնիկ ունիս՝
Մահ-տուն ունիս։

35

Գեշ կնիկ՝
Ավրե տնիկ։

36

Գմշուն ըսին. «Կապրիս ի՞նչքան».
Ըսեց՝ «Ձեթն ու ջուր դինան»։

37

Գիկան, կէրթան ամպ ու անձրև,
Սարն էն սարն է՝ վրեն արև։

38

Դատավորին ա՛չք չկա,
Դատավորին անկա՛ջ կա։

39

Դարբնին դանակ չկա,
Ջուլյակին պատանք չկա։

40

Դրռ չը գացի ավազան՝
Ձեռ կը թալե գավազան։

41

Դրրսից՝ փիլա,
Ներսից՝ զիլա։

42

Զարկի լորուն,
Քիսավ ջորուն։

43

Զձիանք նալին,
Իշվան յոտներ վերցուցին։

44

Զոքանչն ու փեսեն,
Վա՜յ, չը թթվի քասեն։

45

Էլու բերան՝
Ջվլու բերան։

46

Էղնի կրակ՝
Վառե զպրակ։

47

Էշ հաղ մե գնաց, ընկավ գարու հոր.
Ըսեց. «Էս լավ է, քընց իմ մամու փոր»։

48

Էշն ի փալան,
Մարդն ի հալավ։

49

Էշ չէղնի մատաղ,
Գին կէղնի մատաղ։

50

Էշն րոբկի՝ չուտե խոտ,
Դասթմալ աւան գացին մոտ։

51

Էկեր է դրսենին՝
Դուս կենե ներսինին։

52

Ընձի պահե բողջամիջի,
Քրզի պահիմ մարդամիջի։

53

Ըսե «ջա՛ն»,
Լսե «ջա՛ն»։

54

Ըսել ու էնել՝
Իրարու ախպեր։

55

Թե պլիկն էղավ փարա՝
Դու կէղնիս ընձի բաբա։

56

Թիզ ու կես՝
Գետնի դզեզ։

57

Թե խաթրով չիգա՝
Ձվնով դիկա։

58

Թունդիր չկա ցան ու փոշի,
Գլուխ կապեր է թուխ փուշի։

59

Թրի յարեն կը սաղնա,
Լիղվի յարե՛ն չը սաղնա։

60

Թըղ ըսին «գե՛շ է»,
Ձըսին «է՛շ է»։

61

Ժողովուրդըն քնած աւուծ կը մնի,
Օր զարթավ՝ էլ չը քնի։

62

Ինադ էրեց էլերուն,
Ուր ֆ.. տվեց գելերուն։

63

Իծուն օր ռաղի իտաս՝
Կոտրշներ կանչին «շաբա՜շ»։

64

Ինչ իլիկ, ինչ խիպիլիկ,
Ինչ Քաչլիկ, ինչ ուր կնիկ։

65

Ինչ օր բրդիս՝
Է՛ն կը քրթիս։

66

Ինչ չը տեսի պատեն կախ,
Մկա տեսի ճակտեն կախ։

67

Իմալ շիլն՝ աստված,
Աստվածն՝ ի շիլ։

68

Ինչ օր թալին վըր իմ թևին,
Էն թըղ իշնա վըր քու թևին։

69

Ինչ օր ցանիս՝
Է՛ն կը քաղիս։

70

Ինչ օր ըսիս՝
Է՛ն կը լսիս։

71

Իշուն բանջար խաշե,
Թե չը կերավ՝ գլխուն քաշե։

72

Լավ է մորթուս՝
Քան թե օրդուս։

73

Լծե ղքու խեղճ մոզին,
Մ՝երթա դռնակն ի բոզին։

74

Լեզուն մեկ կը խոսա,
Հացն երկու կը խոսա։

75

Խոչն օր ճղից հեռենա՝
Գիլու բաժին կը դառնա։

76

Խոպի քռնուկ թոփալ Հլեն,
Գովքից՝ ալկամն հանեց կալեն։

77

Խունկ խաչերո՛ւն կը վեր,
Փլած բերդին չը՛ վեր։

78

Մուռ ֆոտներուն՝ ջզմա,
Խլնքոտ քթին՝ խզմա։

79

Կատվին ըսին. «Քու աղբ դեղ է»,
Շուտ մե վազեց, օր անթեղե։

80

Կիսրար կորեկ ցանած՝
Կորնկներն ին կերած։

81

Կտրած նուռ, կոտրած կուռ,
Ջէրկուս կառնե խելքե ծուռ։

82

Կնիկ ունիս խանըմ-խաթուն,
Ցորի՞ն կէրթաս էլ հարսընքտուն։

83

Կնկա ֆել՝ բարձեր են սել.
Սել չը տաներ կնկա ֆել։

84

Կնկա սուդն ի սեղան
Մարդու սուդն ի փողան։

85

Կոտրավ կաղ,
Կպավ սաղ։

86

Կաավ՝ կտավ,
Վի՞ր խելք մտավ։

87

Կսկըծու՝
Փա՜ռք աստըծու։

88

Հարի հարսն էկավ հավար՝
Հավեր կերան զձավար։

89

Հարի ֆետին դա՝
Ցառջին կէրթա։

90

Հարի չիգա ֆետին՝
Ջը հիշվի առջին։

91

Հարս գնաց քավորանց,
Գիցավ, թե գնաց հորանց։

92
Հացն էղեր է ձիավոր,
Մարդն էղեր է ոտավոր։

93
Համ կը նեղե,
Համ կը ղեղե։

94
Հենքն իշկե, կտավ առ,
Մամն իշկե, աղջիկն առ։

95
Ձեն ջընկավ ձոր,
Տարա՛ն պապկա պ...։

96
Ձին օր խաղա՝ տեր կը գովան,
Թուր, օր կտրե՝ ձեռ կը գովան։

97
Ձին նստավ՝ աստված մոռցավ,
Ձիուց իջավ՝ ղձին մոռցավ։

98
Մալին տեր է պետք,
Օրդուն հեր է պետք։

99
Մալ՝ մաքին,
Մուլք՝ ջեգին։

100
Մա՛րդ լե կա,
Մարդա՛կ լե կա։

101
Մարդ թըղ ջետին շունն էղնի,
Անտեր ու անտոմն չէղնի։

102
Մարդ թըղ ջահել էղնի,
Շապիկ՝ թել-թել էղնի։

103
Մարդումն՝ սուֆրա-սեղան։
Կնկան՝ կանած փողան։

104
Մարդուն ինչ տեղ օր ցավա՝
Հոգին էնտեղ կը նվա։

105
Մարդ ու կին՝
Ջարդուկ ին։

106
Մարտա վեց՝
Ջուն ձան ցեց։

107
Մեկի ա՛չքն է սուր,
Մեկի թո՛ւրն է կտուր։

108
Մեկ մեռնի՝ հազար կը շիվրի,
Հազար մեռնի՝ մեկ չը շիվրի։

109
Մեկ-մեկու ջապով՝
Գել կերավ զհորթ՝ կապով։

110
Մեկուճար՝
Ապրի բանջար։

111
Մեռնի կնիկ՝
Ավրի տնիկ։

112
Մը վա՛խենա ջելման դետեն,
Վախեցի դու մարմանդ գետեն։

113
Մբեն ջելանք,
Մրկաթն ջընկանք։

114
Ցառջի կնկա պագն է անուշ,
Ցետին կնկա ք... անուշ։

115
Ցերեսդի սիվտակ՝
Քընց պուտկի տակ։

116
Ցընցի ձիու ջառջևեն,
Ցընցի շան ջետևեն։

117
Ցըմեն բանին բանգետ,
Բանելու մեջ՝ անգետ։

118
Ցոթ սարի ջետևին՝ գիկա,
Մինակ մեռուկն էլ ետ չի գա։

119
Ցոտաց փստալ կը կանի,
Լեզվի փստալ չը կանի։

120

Նստիմ գոգիդ,
Առնիմ հոգիդ։

121

Շատ կէրթա վըր շատին,
Իշու պոչ աղքըտին։

122

Շատ բանողին՝ շալէ շապիկ,
Քիչ բանողին՝ շարէ շապիկ։

123

Շատ քաղցր մ'էղնի, օր կլանիս,
Շատ դառըն մ'էղնի, օր թքանիս։

124

Շիվար՝
Գնաց մըտ բնդիվար։

125

Շուն էն շնեն՝
Էրկուս մեկ տնեն։

126

Շուն՝ հա՛ շուն,
Ինչ բալաք, ինչ նրխշուն։

127

Շուն ինչ ուտա՝
Է'ն դուս կուտա։

128

Ոչ դո՛ւ աղեկ, ոչ է'ն բարի՝
Էրկուս լէ մեկ արտի դարի։

129

Ոչ մարդանման,
Ոչ մարդահավան։

130

Ոն հիվընդին կը հարցու,
Է'ն հիվընդին կը սաղցու։

131

Ոն տարավ զաղունն աղաց,
Ոն կերավ՝ թեխա՞ղ խաղաց։

132

Ոն քրթեց զկաշին,
Ոն կերավ զբիշին։

133

Ոն անկաչ չէնե մեծին՝
Կնկնա ի խոր հնեծին։

134

Ոն չը ծեծե ուր կնկան՝
Էն վա՛յ կիտա ուր ծնկան։

135

Ո՞ն է լսի, ո՞ն է տեսի,
Որ չոր քարին օսկի բուսի։

136

Ոտով չընկի, օր չելնաս,
Լեզվով մ'ընկի, օր չելնաս։

137

Ոն ուս՝
Մեր հալն էս։

138

Որ կուշտ՝
Էն չուշտ։

139

Որտեղ օր միս ու մսլախ՝
Կատվըներ կանած սիսլախ։

140

Զարն անօրեն՝
Զճիժ գողնա մամու փորեն։

141

Զրն զինա ո՛ն է մեռի,
Կըսին. «Վա՜խ, ափսո՛ս, քեռի՜»։

142

Զը կոնա ուր քիթ խնչե՝
Կանի՝ ամսյեր կը փչե։

143

Զուրի չըսիս՝
Բան չը լսիս։

144

Զուրի խելոք խելքի դա,
Խելառ զգետ գընցնա։

145

Պաս կոտրիմ՝ ածի՛կ ուտիմ,
Պաս ուտիմ՝ ժաժի՞կ ուտիմ։

146

Պետքականն ի հող,
Անպետքն ի շող։

147

Զուր կը խմե բազմնակ,
Հավկիթ կածե խաղանակ։

148

—Ջո՛ւր, քու մեջ ի՞նչ օրուտ է.
Ըսեց.—Տակսի քարոտ է։

149

Սեր կուտե սովոր,
Թան կուտե մոլոր։

150

Սեր՝ դառձի սուր,
Արուն՝ դառձի ջուր։

151

Սուտ՝
Ուր տակ փուտ։

152

Սուտ՝ անպետքին խառջ,
Էրկուսի ոտներ լե կառճ։

153

Վատ օր կաղեկնա.
Վատ մարդ չա՛ղեկնա։

154

Տաշա՞ծ է սուն՝
Խելառ կա տուն։

155

Տավար կապով կը կապին,
Մարդուն լեզվով կը կապին։

156

Տեռ՝
Էղավ բեռ։

157

Տնփեսա՝
Շընփեսա։

158

Տուն կա՝ շեն տուն,
Տուն կա՝ շան բուն։

159

Տվեց օսկին,
Բերեց խոսքին։

160

Փշի տալդեն ու փեսին,
Փշին աղեկ, քընց փեսին։

161

Քարն ինչ խդեր մեծ էղնի՝
Առանց խճի չը կանի։

162

Քիչ սատանա կեր մըջ ջաղաց,
Մեկ լե էկավ շողտուն՝ խաղաց։

163

Քոլ իծուն կոտոշ չկեր,
Գիցան հերվս ուլիկն էր։

164

Քոռ մուկն ինչքան հող փորե՝
Հողն ուր գլխուն կը բերե։

165

Օձու խածուկ կը քնի,
Անոթի մարդ չը քնի։

166

Օշախ՝
Չէղնի պուճախ։

167

Որ կէրթա՝
Խաթեն չէրթա։

168

Որ կա՝ աղու,
Որ կա՝ խաղու։

169

Ֆել ու ֆանդ բանցուց՝
Ուր քալաքն ջընցուց։

Դ. ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

1

Ա՜խ, վառա՛, վառա՛,
Տնավեր Սառա.
Ես քըզի չառա,
Քու դարդեն մեռա։

2

Աստված տա լաքուն,
Որ տա ձագուն.
Չիտա լաքուն,
Չիտա ձագուն։

3

Արեգակն արդար,
Էրթանք մըտ Զարդար,
Զըմ կունա կարդար։

4

Աքլատիզ՝
Զվանն ի վիզ,
Զուր ե՞ր կախվիս
Ի ջերդիս։

5

Գացի մտա գոմիկ մե,
Գտա ձիթի պուվիկ մե,
Ջարկի գետին կոտրեցի,
Կանտն ի գոպալ էցկեցի։

6

Դալա՛ր թաթիկ,
Ջուր բեր,
Փլավ էփիմ՝
Դու կեր։

7

Դու կաներ իս աղրրի ական,
Փելքրդ նման արեգական։

8

Էկավ նորփեսա Գրգեն,
Մեկ փեշն է կառճ, մեկ ֆերկեն.
Աչքեր մեծ-մեծ, լուս չունի,
Հաստ թևերուն ուժ չունի։

9

Էկա՛ն, էկա՛ն Մոկաց հարսներ,
Մոկաց հարսներն են քամարով,
Հա՛մ քամարով, հա՛մ քնարով։

10

—Էրե բան մե,
Տամ քրզի ճան մե.
—Կէնիմ բան մե,
Օր չաժե ճան մե։

11

Թեթվամսի՛կ,
Թեթվաջրի՛կ,
Ջուչամսի՛կ,
Ցերկընվզի՛կ,
Թը՛ղ անուշ քուն
Ցիգա քրզիկ։

12

Ի՞մալ էնինք,
Խլո՛, լա՛ո,
Մեր ճրժկրներ
Դո՞ր ծվարինք,
Խլո՛, լա՛ո։

13

Ո՞ն է տեսի մուրքով հոտաղ,
Ջափուկ մե աղբ՝ մուրքեն ի կախ։

14

—Տո, տղա՛, լա՛ո, հորիք քշե,
Բաշոն ֆի՛շ տու, Ջալո՛ն քշե։

15

Կարկաչա,
Կարինաչա,
Որ չիտա զիմ կարկաչեն՝
Կէրթամ ըսիմ խոլ իրիցուն,
Գա անիծե ձեր ձձում։

16

Կո՛ւկլուլուլո՛ւ,
Լո՛ւս է.
Վրգոյի աչք
Դուս է։

17

Կո՛ւկլուլուլո՛ւ,
Աչքսի ձեր տուն,
Ձեր թաժա հարս
Ճամպեք մեր տուն,
Հմալ պագիմ՝
Ժաժ գա ձեր տուն։

18

Հաց, հացի հրիշտակ,
Արդար եզան վաստակ,
Ցելնաք բարեխոս
Առ աստված։

19

Իմ մամ էստեղ է ծնկի՝
Վարդաջրով ղիս տնկի,
Ե՞ր գիկան զիս տանելու,
Դարդերու ծովն իմ ֆընկի։

20

Լալվան շորի,
Տամ խնձորի,
Ա՛ռ ու կորի։

21

Լվամ, լվամ չիստրկի,
Վարդաջրով գիստրկի,
Փուք տամ ու փուշին փռիմ,
Ծալ-ծալ ի ծոցիկ դնիմ։

22

Խուկլի հաց ու հատիկ,
Բարով ֆիգա մեր զատիկ։

23

Ծամոն ծամիմ՝
Ջարկիմ սան ծակ.
Ո՛չ թե զարկիմ
Բալաք շան ծ...։